

# Յոյն

1200 թվման  
Հայաստանում 320 դրամ



## ԿԱՀԱՒՈՐԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ

# ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **Համայնք**
- 4 **Ստիւ Զորգի մայրը հայ է եղել**
- 5 **Խաղաղ պայմաններում բանակում սպանւած զինուորների հարցը**
- 14 **Լուսինը ինչի՞ նշան է Ազատ Մաթեան**
- 16 **Մշակոյթի օրւայ առիթով Քարմէն Ազարեան**
- 18 **Թոմաս Թրանսթրիմեր Շանթ Բաղդամեան**
- 20 **Տեսնել թատրոն, խօսել թատրոն, լսել թատրոն Լիլիթ Ամիրխանեան**
- 22 **Խոհանոց՝ Սոխարիով ձու**
- 23 **Ատամնացաւը կարելի է մանկուց կանխել**
- 24 **Մարգանք**
- 27 **Ժամանց**

Մշակութային եւ Հասարակական  
**Յոյս**  
 Երկշաբաթաթերթ  
 Ե սարի, քիւ109, Հոկտեմբեր 26, 2011,  
 1200 քուման  
 Հայաստանում 320 դրամ



## 8 Կահաւորել հայրենիքի դպրոցները

Հարցազրոյց «Հայ դպրոց» հիմնադրամի վարչչութեան նախագահ Արմէն Աբրահամեանի եւ խորհրդատու Վահէ Սիարունեանի հետ

### Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

2	Այս համարի հայերէն էջերում	Հայաստանի երեք նախագահները զալիք ընտրութիւններում	10	Վիզնի մահւան ուլթամեակի առիթով	
4	Փոքրամասնութիւնների ներկայացուցիչների հանդիպումը ոստիկանութեան հետ	8	Սպիտակի երկրաշարժը Սովետական Հայաստանի վերջին տարիներին	12	Հարցազրոյց Վիզնի եւ Կարոյի քրոջ՝ Ժուլիետի հետ Մինու Սաբերի
6	Երեք ընկերներ՝				

<p><b>Յոյս</b>                  Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտոնատէր՝                  Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝                  Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմէն Ազարեան,                  Լիա Խաչիկեան,                  Գարուն Սարգսեան,                  Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարւեստական ձեւաւորում՝                  Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝                  Քարմէն Ազարեան</p> <p>Կայք                  Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական                  Արման Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն                  Քաթրին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝                  Թեհրան, Էնդելար պողոտայ,                  Վալի Ասր քառուղի                  համար 1048                  66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝                  66495208</p> <p>hooyes@inbox.com                  www.hooyes.com</p>
---	---	--	---

## ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԹԵՂՐԱՆԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ



Երկուշաբթի՝ Հոկտեմբերի 10-ին կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները՝ իրաւապահ ուժերի շաբաթայ առիթով հանդիպում ունեցան Թեհրանի ոստիկանութեան հրամանատար Հոսէյն Սաջեդիմիայի հետ: Սոյն հանդիպմանը, որը կազմակերպել էր Իսլ.առաջնորդութեան եւ մշակոյթի նախարարութեան փոքրամասնութիւնների վարչութեան նախաձեռնութեամբ, ներկայ էին Իսլ.խորհրդարանում կրոնական փոքրամասնութիւնների պատգամաւորները, միութիւնների ու մշակութային կենտրոնների նախագահները, ստաւորականներ եւ մամուլի ներկայացուցիչներ:

Հանդիպման սկզբում Իսլ.առաջնորդութեան եւ մշակոյթի նախարարութեան փոքրամասնութիւնների գծով վարչութեան վարիչ պրն.Սաիդ Թաղաւին իր ելոյթում յատկապէս շեշտեց. «Մեր սիրելի երկրի մայրաքաղաքում գտնուող հայ, ասորի, զրադաշտական եւ քաղղէական փոքրամասնութիւնների հոգեւորականների, Իսլխորհրդարանում նրանց պատգամաւորների, գիտութեան, արւեստի ու մշակոյթի գործիչների, եւ միութիւնների ու հաստատութիւնների նախագահների հետ ձեզ մօտ ենք ներկայացել՝ մեր շնոր-

հաւորանքն յայտնելու իրաւապահ ուժերի շաբաթայ կապակցութեամբ: Ինչպէս որ գիտէք, նրանց պատկանող կենտրոններում՝ եկեղեցիներում, զրադաշտական կրակատներում, միութիւններում ու մշակութային կենտրոններում, որոնք կարծում են աւելի քան 40-ն են, յատուկ սովորութիւններ են տիրում, որոնք տարբերում են հասարակութեան մեծամասնութիւնից: Հիմնական օրէնքում նախատեսուած չորս կէտերով մեր հայրենակից կրոնական փոքրամասնութիւններին ազատութիւն է տրուել՝ պահպանելու իրենց սովորութիւնները, իսկ իշխանութիւններն էլ պարտաւոր են ապահովելու նրանց անվտանգութիւնն ու խաղաղութիւնը:

Այս կարգի հանդիպումները արդիւնաւետ են յատկապէս այն առումով, որ դուք մօտից ծանօթանում էք կրոնական փոքրամասնութիւնների խնդիրների հետ: Իսկ հէնց հիմնականից ուզում ենք խոստանաք, որ յառաջիկայ Ս.Ծննդեան տօներին, անցեալ տարւայ պէս ներկայ կը լինէք մէկ-երկու եկեղեցում կատարող արարողութեանը»:

Այնուհետեւ հերթաբար ելոյթ ունեցան Իսլ. խորհրդարանում կրոնական փոքրամասնութիւններ

րի պատգամաւորները, որոնք շնորհակալութիւն յայտնելով քաղաքի անվտանգութիւնն ապահովելու ուղղութեամբ իրաւապահ ուժերի թափած ջանքերի համար, բոլորը յատկապէս շեշտեցին, որ հիմնական օրէնքի միջոցով նպաստաւոր պայմաններ են ստեղծել փոքրամասնութիւնների իրաւունքները պաշտպանելու համար:

Իսկ Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր պրն.Գէորգ Վարդանը եւս իր խօսքերի մէջ նշեց. «Երբ պատերազմ էր, զնացինք ու կռւեցինք, վերակառուցման շրջանում կառուցեցինք, իսկ դպրոցներում, համալսարաններում ու մշակութային ոլորտում ջանացինք կարգապահ քաղաքացիներ լինել: Փոխադարձաբար հիմնական օրէնքում ի պաշտպանութիւն մեր հաւատքի ու մշակոյթի յօդուածներ են գետեղւել, որոնց մասին լիովին տեղեակ են թէ երկրի ղեկավարութիւնը եւ թէ մենք:

Հանդիպման աւարտին մեծարւեցին պատերազմի երկու հայ նահատակների ընտանիքները, իսկ կրոնական փոքրամասնութիւնների ներկայացուցիչների կողմից մի նւեր յանձնւեց Թեհրանի ոստիկանութեան հրամանատարին:

# ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐԻԱՅ ԱՌԹԻ ՀԱՆՂԷՍ «ԱՐԱՐԱՏ»-ՈՒՄ

Արփինէ Սինանեան



Ուրբաթ, Հոկտեմբերի 14-ի առաւօտեան ծիծաղի ու խանդավառութեան ձայներ էր լսուում «Արարատ» մարզաւանի մատուռի եւ այգեստանի շրջափակում:

Այդ օրը մանուկների դաշտահանդէսն էր Մանուկների համաշխարհային օրւայ առիթով:

Այդ գեղեցիկ ձեռնարկը, որը մանուկների տարւան վերաբերող ձեռնարկների շարանից էր, յանձն էր առել Հայ մանուկների տարւայ յանձնախումբը:

Նրանք կազմակերպել էին հաճելի ժամանց մանուկների համար: «Ակունք» կենտրոնը, եւ Քրիստոնէական դաստիարակչական կենտրոնի կիրակնօրեայ դասարանների դաստիարակները գեղեցիկ ձեռքի աշխատանքներով հիւրընկալում էին մանուկներին եւ օժանդակում էին այս ձեռնարկին:

Փոքրիկները ծնողների օգնութեամբ մասնակցում էին թռուցիկների ուրախ փառատօնին, մատուռի շուրջը տաղաւարների մօտ մի խումբ մանուկներ պատրաստում էին թռուցիկներ, ձեռքի

աշխատանքներ եւ..

Այգեստանի միւս կողմում նկարում էին միասնական նկարչութիւն, կար գրքի վաճառք եւ ազատ բեմ: Գոյնզգոյն փուչիկներով լի փոքրիկների աշնամային այդ գեղեցիկ օրը Սրբազան հօրներկայութեամբ շատ աւելի թարմացաւ, Սրբազան հայրը գեղեցիկ

խօսքերով օրհնեց մանուկներին եւ նրանց հետ անցկացրեց հաճելի ժամանց:

Թող շառաչի ջրվեժի պէս, Ձնգուն երգը մանուկների, Երջանկութիւն պարգեւեն մեզ, Լեզուներով բիւր աշխարհի:



# ԻՆՉ ՊԻՏԵՆՔ ՍՏԻ ԶՈՐՉԻ ՇՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅ Է ԵՂԵԼ ՆՐԱ ՄԱՅՐԸ

Հոկտեմբերի 5-ին իր մահկանացուն կնքեց մեր ժամանակների ամենաուշիմ, ճանաչված եւ հնարամիտ արդիւնաբերական ղեկավարներից մէկը՝ Ստիւ Ջորջը: Նա յատկապէս հռչակ էր վայելում որպէս աշխարհահռչակ «Ափըլ» համակարգչային ընկերութեան համահիմնադիր եւ ղեկավար, եւ այդ ընկերութեան արտադրանքներից շատերի գիտարար: Նրա մտայղացումն է եղել տնային համակարգիչների առաջին սերունդը՝ Ափըլ Մաքինթաշը, երաժշտութիւն ունկնդրելու սիրած սարքաւորումը այ-փոդը եւ այ-թիւնը, առաջին թաբլեթը՝ այ-փադը եւ ամենաճկուն եւ զարգացած բջջային հեռախօս՝ այ-ֆոնը: Նա միաժամանակ մեծ ներդրում է ունեցել ժամանակակից թւային անիմացիոն կինոյի զարգացման մէջ, հիմնադրելով «Փիքսար» ընկերութիւնը, որի արտադրութիւնները, յատկապէս «Խաղալիքների պատմութիւնը» (Toy Story) ծանօթ են բոլոր երեխաներին:


Ստիւ Ջորջը ծնւել էր 1955 թւականի Փետրւարի 24-ին Սան Ֆրանսիսկոյում եւ մանկութիւնից որդեգրւել էր Փոլ եւ Քլարա Ջորջի կողմից, որոնք չէին կարողանում երեխայ ունենալ: Նրա խորք մայրը՝ Քլարան, հայ գաղթական ընտանիքի զաւակ էր, որոնք 1915 թւականի կտորածների ժամանակ հաստատուել էին Միացեալ Նահանգներում:

Փոլը եւ Քլարան միջին դասակարգի ստորին խաւերին էին պատկանում: Ստիւի հայրը, որ նոյնիսկ դպրոցը չէր աւարտել, մեխանիկ էր, իսկ մայրը՝ հաշուապահ: Ստիւ Ջորջը նրանց համարում էր իր իսկական ծնողները: Նա հաւատացած էր, որ իր անհատականութիւնը աւելի շատ դաստիարակութեան արդիւնքն է, քան բնական բիոլոգիական կապերի: Նա իր հօրը համարում էր «ձեռքերով հանճարեղ» եւ յաճախ ասում էր, որ կը ցանկանայ իր երեխաների համար նոյնքան լաւ հայր լինել, որքան Փոլն էր եղել իր համար: Ջորջ ընտանիքը 1958-ին որդերգրեցին մի աղ-

ջիկ եւս՝ Ստիւի քրոջ Փաթիին:

Դժբախտաբար Փոլն ու Քլարան շուտ մահացան՝ մայրը՝ 1986-ի Նոյեմբերին 62 տարեկան հասակում, իսկ հայրը՝ 1993-ին, 70 տարեկանում: Նրանք չտեսան իրենց որդեգրած զաւակի փայլուն յաջողութիւնների կարեւոր շրջանը:

Ջորջը ներառւել էր աշխարհի ամենահարուստ անձանց ցանկում, եւ միջազգային բիզնեսի ամենագօրեղ ղեկավարներից մէկն էր:



# ՍԱ ԻՆՉ ԵՐԵՒՈՅԹ Է

## ԲԱՆԱԿՈՒՄ ԽԱՂԱԳ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԶԻՆԻՐՆԵՐԻ ՄԱՀԻԱՆ ԴԵՊԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

### ՀԻՆՉ ՕՐՈՒՄ ԶՈՂԻՆ Է 3 ԶԻՆԻՐ. ԽԱՂԱԳ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲԱՆԱԿՈՒՄ ԳՐԱՆՅՒԱԾ ԴԵՊԵՐԸ ԿՐԿԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԺԳՈՂՈՒԹԻՆՆ ԵՆ ՅԱՐՈՒՅՆԷԼ

Հինգշաբթի Հոկտեմբերի 13-ին հայկական բանակում զինւորի մահւան հերթական դէպքն է գրանցւել, որը 5 օրերի ընթացքում արդէն երրորդ միջադէպն է: Դէպքը տեղի է ունեցել՝ Իջեւանի զօրամասում, որտեղ, ըստ պաշտօնական տեղեկատուութեան՝ շարքային զինւոր Արամ Մելքոնեանը մահացել է իրեն ամրակցւած ինքնաձիգը մաքրելիս՝ ինքն իրեն հրազենային վիրաւորում հասցնելով որովայնի շրջանում: Այս դէպքին նախորդող օրը՝ Հոկտեմբերի 12-ին, Հայաստանի զօրամասերից մէկում մահացել էր 19-ամեայ Իւրիկ Ներսիսեանը, որը, ըստ պաշտօնական տեղեկատուութեան՝ «ինքնասպանութիւն է գործել իրեն ամրակցւած զէնքով», իսկ աւելի վաղ՝ Հոկտեմբերի 9-ին, ԼՂՀ Մարտակերտի շրջանի զօրամասերից մէկում, կրկին պաշտօնական տեղեկատուութեան համաձայն, ինքնասպան էր եղել 19-ամեայ Վլադիմիր Ասատրեանը: Այս սպանութիւնները եւ բանակում զինւորների նկատմամբ հալածանքների եւ բռնութեան կիրառման խնդիրը կրկին հասարակութեան դժգոհութիւնն են յարուցել: Արդէն 4 տարի շարունակ իւրաքանչիւր հինգշաբթի կառավարութեան շէնքի առջեւ հաւաքւում են բանակում խաղաղ պայմաններում մահացած զինւորների ծնողները, որոնց բողոքի ակցիային վերջին ամիսներին միացել են

նաեւ քաղաքացիական ակտիւիստներ, իրաւապաշտպաններ՝ կարծելով, որ միայն «համախմբելով հնարաւոր է պայքարել բանակում առկայ խնդիրների դէմ» եւ այլն: Հոկտեմբերի 14-ին եւս կազմակերպւել է հերթական բողոքի ակցիան ՀՀ նախագահի նստավայրի առջեւ, որի առնչութեամբ «Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնութիւնը հանդես է եկել յայտարարութեամբ, որում, մասնաւորապէս, ասւում է. «Վերջին 5 օրում եւս երեք զինւոր է «ինքնասպանութիւն» ՀՀ բանակում, եւ այս ցուցակն աճում է ժամ առ ժամ: Պէտք է հէնց հիմա քայլեր ձեռնարկել՝ դա կանխելու համար: Գերագոյն գլխաւոր հրամանատարը պարտաւոր է երաշխիքներ տալ, որ մեր զօրակոչւած ԲՈԼՈՐ որդիները տուն են վերադառնալու ողջ եւ առողջ»:

### ԲԱՆԱԿՈՒՄ ՍՊԱՆԻԱԾ ԶԻՆԻՐՆԵՐԻ ՀԱՐԱՉԱՏՆԵՐԸ, ԱԿՏԻՒՍՆԵՐԸ ԲՈՂՈՔԻ ԵՐԹ ԵՆ ԱՆՉ-ԿԱՅՐԵԼ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Հինգշաբթի (Հոկտեմբերի 13) առաւօտեան ՀՀ կառավարութեան շէնքի մօտից մեկնարկեց բանակում խաղաղ պայմաններում զոհուած զինծառայողների հարազատների երթը դէպի գլխաւոր դատախազութիւն, այնտեղից էլ՝ ՀՀ նախագահի նստավայր: Երթի նախաձեռնողը «Չենք լռելու» քաղաքացիական խումբն էր, որի անդամները եւս միացել էին երթին: Մասնակիցների ձեռքին «Բանակը՝ սպանդանոց», «Մենք կոյր չենք, վե՛րջ բռնութեանը», «Ես որդի չունեմ մարդակեր բանակի համար» գրութիւններով պաստառներ էին: Չոհուած զինծառայողների նկարները ձեռքերին սեւազգեստ մայրերը պահանջում էին իրենց որդիների սպանութիւնների օրից ակտիւ բացայայտում եւ պատիժ դրանք իրականացնողների նկատմամբ:



«Ամեն օր արդարադատութեան ենք սպասում: Յերիք եղաւ, որքա՞ն կարելի է լռել, որքա՞ն կարող ենք ամէն հինգշաբթի գալ ու կանգնել կառավարութեան շէնքի առջեւ: Իրենք էլ գալիս են ու ժպտալով անցնում, կարծես մենք հաւ ենք կորցրել, կարծես ոչինչ չի եղել, այդ ցաւը պէտք է իրենք իրենց մաշկի վրայ զգան, որ հասկանան մեզ», -ասում է Նանա Մուրադեանը, որի որդին՝ Վալերի Մուրադեանը, մահացել է 2010 թւականին ԼՂՀ Յայկազովի զօրամասում:

Համաձայն պաշտօնական վարկածի՝ Վալերին ինքնասպան է եղել, սակայն ծնողները պնդում են, որ տղային խեղդել են, ապա՝ կախել:

«Կապտուկներ կային մարմնի տարբեր մասերում՝ թելերի տակ, թելերի վրայ, վզի վրայ՝ մատների հետքեր, քիթն էլ ճզմւած էր: Վզի վրայ պարանի երկու հետքեր էլ կային: Սա նշանակում է, որ երեխայիս անսպասելի, յետեւից պարանը գցել վիզը, խեղդել են ու նոր կախել», - ասում է Վալերիի մայրը:

Երթի մասնակից, «Զանգակատուն» ՀԿ անդամ Քնարիկ Գալանտերեանն ասում է. «Երեք տղայ ունեն, որ պէտք է գնան հայրենիքին ծառայեն ու ոչ թէ մատաղ լինեն, եւ ի՞նչ շքերթ են անելու ամսի 21-ին, ինչպէ՞ս կարելի է այս սզի մէջ շքերթ անել: Թող զօրակոչը դադարեցնեն ու յստակ երաշխիքներ տան մեզ՝ ծնողներին: Ուզում ենք վստահ լինել, որ մեր տղաները բանակ են գնում ծառայելու եւ ոչ թէ խոշտանգւելու»:

Նախագահական նստավայր հասած երթի մասնակիցները պահանջում էին հանդիպում նախագահի հետ, սակայն նրանց ոչ ոք չմօտեցաւ:

Հելսինկեան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր

Սաքունցն ասում է, որ ակցիան շարունակական է լինելու՝ մէկ ամիս:

«Գերագոյն գլխաւոր հրամանատարը՝ Սերժ Սարգսեանը, պէտք է երաշխիքներ տայ, որ բանակում մահուան դէպքեր չեն լինելու, եւ յստակ հետեւի, թէ ինչ կանխարգելիչ միջոցառումներ են իրականացւելու, իսկ եղած սպանութիւնները յստակ բացայայտւեն, իրական պատասխանատուները պատժւեն: Եթէ մէկ ամսում որեւէ փոփոխութիւն չեղաւ, ապա մենք կանցնենք մեր յաջորդ քալիւն», - ասում է Սաքունցը:

Նախագահական նստավայրից երթի մասնակիցները կրկին վերադարձան կառավարութեան շէնքի մօտ, որտեղ էլ այն աւարտւեց:

## ԱՒԵԼԻ ՇԱՏ ՀԱՐՅԵՐ ԲԱՆԱԿՈՒՄ ԳՐԱՆՅՈՒՄ ՄՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ. ԱԿՏԻՒՍՏՆԵՐԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆՆԵՐ ԵՆ ԴԱՆԱԶՈՒՄ ԶՕՐԱՄԱՍԵՐՈՒՄ ՆՈՐ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԻՆՔ-ՆԱՄՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՉ ՅԵՏՈՅ

Զորեքշաբթի (Հոկտեմբեր 12) հայկական բանակում զինւորի մահուան նոր դէպք է գրանցւել, որը վերջին չորս օրերի ընթացքում արդէն երկրորդ միջադէպն է: Խաղաղ պայմաններում զոհուած



զինուորների այս նոր դեպքերը կրկին ցնցեցին հասարակութանը: Մի շարք իրաւապաշտպան կազմակերպութիւններ, որոնք Սեպտեմբերին պահանջ էին ներկայացրել իրականացնել «լուրջ քայլեր» իրավիճակը շտկելու համար, չորեքշաբթի յայտարարեցին, որ մէկամսեայ ժամկետը լրացել է, իսկ ձեռնարկած քայլերը «բաւարար չեն» եւ հիմք են տալիս պահանջելու ԶԶ գլխաւոր գերագոյն հրամանատար Սերժ Սարգսեանի եւ ՊՆ նախարարի հրաժարականը:

Յոկտեմբերի 12-ին Հայաստանի զօրամասերից մէկում մահացել է 19-ամեայ Իւրիկ Ներսիսեանը, ըստ պաշտօնական տեղեկատուութան՝ «ինքնասպանութիւն է գործել իրեն ամրակցած զէնքով»:

Յոկտեմբերի 9-ին էլ ԼՂՀ Մարտակերտի շրջանի զօրամասերից մէկում, կրկին պաշտօնական տեղեկատուութեամբ, ինքնասպան է եղել 19-ամեայ Վլադիմիր Ասատրեանը:

Ասատրեանին «ինքնասպանութեան հասցնելու» մեղադրանքով արդէն իսկ ձերբակալել է երեք զինուոր, որոնց անուններն ու մականունները մահաւանդ առաջ նա գրել էր իր թելի վրայ, չնայած ծնողները չեն հաւատում պաշտօնական վարկածին, սակայն յոյս ունեն, որ գոնէ զինուորի թելին գրած անուններով հնարաւոր կը լինի գտնել իսկական մեղաւորներին: Միւս միջադէպի հետեւանքով ժամկէ-

տային զինծառայողը չի մահացել, բայց խոշտանգումներն ու անմարդկային վերաբերմունքը այնքան խոր հետք են թողել, որ ծնողները կասկածում են, թէ նա կը վերադառնայ բնականոն կեանքի:

19-ամեայ զինուորը (անունը ծնողների խնդրանքով չի նշուում) հոսպիտալացւել է «սուր փսիխոզ» ախտորոշմամբ, մարմնական բազմաթիւ վնասւածքներով: Զօր՝ Մկրտիչ Մկրտչեանի պատմելով՝ իր որդին անտանելի վիճակում է, «գրեթէ կիսամեռ»:

«Երեխուս վրայ մի սաղլամ տեղ չկայ, ականջը՝ գլխի չափ ուռած, ամբողջ մարմինը՝ կապտած, ձեռքերի վրայ՝ հանգցրած սիգարետի այրւածքի հետքեր, չի էլ կարում խոսա, անընդհատ ինչ-որ դեղեր են սրսկում, լրիւ դեբիլացնում են, որ չկարենայ մի բան խոսա, բացայայտի, թէ ով ա էդ գազանութիւնն արել», - ասում է Ղարաբաղեան պատերազմի վետերան Մկրտչեանը՝ յուզւելով, քանի որ հինգ երեխայ ունի եւ կրտսեր տղային էլ մի քանի ամսից պէտք է բանակ ուղարկի:

«Ես չեմ հասկանում, եթէ մեր բանակի ղեկավարները չեն կարա կառավարեն իրանց հրամանատարներին, ուրեմն թող հրաժարւեն, ուրիշ մարդիկ գան, այսր, սա գազանանոց ա, մսաղացի մէջ են դնում մեր երեխէքին», - զայրանում է Մկրտչեանը:

Այս գործով ձերբակալւածներ դեռ չկան, չնայած դէպքը տեղի է ունեցել դեռ մէկ ամիս առաջ: Սկզբում տեղափոխել են զօրամասի բուժկէտ, ապա՝ Ստեփանակերտի հոսպիտալ, յետոյ՝ Երեւանի Կանաչի զինուորական հոսպիտալ եւ միայն Սեպտեմբերի 27-ին են յայտնել հօրը, որ զինուորը հոսպիտալացւել է:

Ձինուորի նւաստացման եւ խոշտանգման այս դէպքը տեղի է ունեցել «Եղնիկներ» զօրամասում, որտեղ Օգոստոսի 26-ին սպանւել

էր զինծառայող Աղասի Աբրահամեանը, իսկ նախորդ տարի էլ տարածւած տեսանիւթը կրկին այս զօրամասից էր, որում հրամանատարը ծաղրուծանակի, բռնութեան ու նւաստացման էր ենթարկում զինուորին:

Ութ իրաւապաշտպան կազմակերպութիւնները նախօրէին տարածած յայտարարութեան մէջ, նշելով վերջին մէկ ամսւայ ընթացքում ՊՆ գործունէութիւնը, շեշտել են, որ «շօշափելի քայլ չի արւել», աւելին՝ ճնշումներ են գործադրւել զոհւածների հարազատների վրայ՝ յորդորելով չմասնակցել բողոքի ակցիաներին:

«...Ճնշումները մահացած զինծառայողների հարազատների նկատմամբ հիմք են տալիս առհասարակ կասկածի տակ դնելու կարգաւորման համար քաղաքական կամքի առկայութիւնը», - յայտարարում են իրաւապաշտպանները:

Սակայն իշխանութեան պատասխանատուները համաձայն չեն այս որակումներին, նորանշանակ ԶԶ գլխաւոր դատախազի տեղակալ, ԶԶ զինդատախազ Գեւորգ Կոստանեանն ասում է, որ «օրիէկտիւ գնահատականներ չեն»:

«Պէտք է պարզապէս համեմատել նախորդ տարիների թւերը, ակնյայտ է, որ թւերը նւազում են, պարզապէս հնչեղութիւնն է աւելացել: Իհարկէ, մենք վերջնական նպատակ ունենք խնդիրն իսպառ լուծելու, սակայն դա երկար համակարգային փոփոխութիւնների արդիւնք կարող է միայն լինել, իսկ դա մէկ օրում, մէկ ամսում չի արւում», - «ԱրմենիաՆաու» ասում է ԶԶ զինդատախազ Կոստանեանը:

Աղբիւր՝ «ԱրմենիաՆաու»





# ԿԱՀԱԴՈՐԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ

**ՀԱՐՋԱԶՐՈՅՑ «ՀԱՅ ԳՊՐՈՅ»-Ի  
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ  
ԱՐՄԷՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ ԵՒ  
ԽՈՐՀՐԳԱՏՈՒ ՎԱՀԷ  
ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ՀԵՏ**



-Խնդրում եմ նախ բացատրեք, թե ընդհանրապես ի՞նչ է «Հայ դպրոց»-ը, եւ ապա խօսեք մանաւանդ Ամերիկայի մասնաճիւղի եւ ձեր պաշտօնի մասին:

-Ուրեմն «Հայ դպրոց» Հիմնադրամը, անգլերէնով՝ «Armenia school foundation»-ը հիմնադրուել է 2003 թւին, որպէս օրինական ու ոչ շահադիտական մի կազմակերպութիւն:

Նախքան այն արդէն Հայաստանում ստեղծուել էր «Հայ դպրոց»-ը, իսկ որպէս քոյր կազմակերպութիւն Ամերիկայում հիմնադրուեց 2003 թւին: Բարեբախտաբար ես ներկայ էի, երբ նրա առաջին վարչութիւնը ստեղծուեց: Ես նրան միացայ 2007 թ., իսկ Պրն. Վահէն

«Ինչու՞ պիտի մեր մատաղ սերնդի մեծ մասը կոտրուած աթոռներին նստի եւ ու ջախջախուած սեղանների վրայ սերտի դասերը, որի հետեւանքով երեխաների հոգեկանն ու ազգային հպարտութեան զգացումը տուժի»: Այսպիսի մտահոգութիւնից ելնելով էր, որ 2000-ականների սկզբնական տարիներին իրանահայ ազգային գործիչ Լեւոն Ահարոնեանը հիմնեց «Հայ դպրոց» հիմնադրամը Հայաստանում: 2003 թւականին պաշտօնապէս գրանցուեց եւ իր աշխատանքն սկսեց Միացեալ Նահանգների «Հայ դպրոց»-ը, որը մինչ օրս կահաւորել է Հայաստանի մօտ 200 դպրոցներ: ԱՄՆ-ի «Հայ դպրոց»-ի վարչութեան նախագահ Արմէն Աբրահամեանը եւ խորհրդատու Վահէ Ահարոնեանը գտնուում էին Թեհրանում: Առիթը պատեհ համարելով հարցազրոյցի հրաւիրեցի՞նք նրանց: Ընթերցողին ենք ներկայացնում մեր զրոյցի արդիւնքը:

սկզբից էլ եղել է: Մենք 2007 թւականից աւելի կազմակերպուած, աւելի աշխուժացած աշխատանք

ենք տարել մինչեւ օրս: 2008-ին մենք նշեցինք «Հայ դպրոց»-ի 5-ամեակը, որը լաւ

# ԳՊՐՈՅՆԵՐԸ



**ԱՐՄԵՆ ԱՔՐԱՅԱՍԵԱՆ**

**ՎԱՅԷ ԱՅՍՐՈՆԵԱՆ**

## **«ՀԱՅ ԳՊՐՈՅ» հիմնադրամի միջոցով կահավորված դպրոցների թիվը շուտով 200-ի կը հասնի...**

արդիւնք ունեցաւ. այդ տօնակատարութեանը 200 հազար դոլար նւիրատուութիւն հաւաքեցինք, որը բաւական մեզ օգնեց գալիք աշխատանքների մէջ: Այսպիսով հիմնա արդէն մեր կազմակերպութեան 8-րդ տարին է, եւ շուտով մեր 10-ամեակն ենք տօնելու, վստահ ենք, որ դա աւելի շատ ճոխ կը լինի:

**-Ամերիկայի այլ մասերում էլ աշխատողներն էք, թե՞ միայն Գլենդէյլում:**

-Մենք հիմնա Գլենդէյլում մի գրասենեակ ունենք, մի փոքր ժողովասենեակ՝ կահավորված ամէն յարմարանքով: Ժողովներն առնազն ամիսը մէկ անգամ տեղի են

ունենում այս գրասենեակում: Ունենք մի 9-հոգանոց վարչութիւն, որը զբաղւած է ընդհանրապէս շահադրական աշխատանքներով, այսինքն՝ մեր հիմնական նպատակը դրամ հայթայթելն է, որն ուղարկւում է Հայաստան, վերածուում է գոյքի եւ յանձնւում դպրոցին: Մեր վարչութեան հիմնական

նպատակներից է յարաբերութիւն ստեղծել ուրիշ կազմակերպութիւնների հետ, որպէսզի իրար հետ համագործակցենք, օրինակ մենք ունենք Գլենդէյլ-Ղափան քոյր կազմակերպութիւնը՝ Glendel sister city association-ը, որ մինչեւ օրս երկու առիթով իրար հետ համագործակցել ենք եւ Ղափանի շրջանում 2-3 դպրոց կահավորել



**-Դա նշանակում է կնունքի փոխարէ՞ն:**

-Ո՛չ, այսինքն՝ կնունքի նւերների կամ ծաղկեպսակի փոխարէն, դրանց դրամը հաւաքւում է եւ տրւում է մեզ, որը կահոյքի ձեւով յանձնում ենք որեւէ դպրոցի, որտեղ օրինակ այդ հանգուցեալի կամ նւիրատուի անունը յիշատակւում է:

«Յայ դպրոց»-ի հիմնական գործն է՝ դպրոցները կահաւորել, այսինքն՝ աթոռ-սեղան, գրատախտակ, ուսուցչական աթոռ եւ սեղան տրամադրել եւ ոչ թէ շինարարական գործեր կատարել:

ենք միացեալ ուժերով: Ունեցել ենք ուրիշ կազմակերպութիւնների հետ յարաբերութիւններ, բայց ընդհանրապէս նւիրատութիւնները կամ գալիս են որպէս նւիրատութիւն, կամ էլ ունենք փոխան-ծաղկեպսակների, փոխաններների, կամ փոխանկնունքի եւ այլն նւիրատութիւններ: Վերջին անգամ մեզ տրուեց փոխանկնունքից մի մեծ գումար:



Յայաստանում կայ, ասենք, շուրջ 1300 դպրոց, իսկ 400 հազար աշակերտներ. տարիներ առաջ, երբ «Յայ դպրոց»-ն սկսել էր ուսումնասիրութիւն կատարել, մեր կամաւորները որոշեցին, որ շուրջ 900 դպրոց իսկապէս կահոյքի կարիք ունի: Ընդհանրապէս աւելի մեծ քաղաքների դպրոցներին աւելի շատ են ուշադրութիւն դարձնում, սակայն ցաւօք սրտի, սահմանամերձ փոքր քաղաքների ու գիւղերի դպրոցներին աւելի քիչ են նկատում: Մեր հիմնական ուշադրութիւնը դրանց վրայ է, այսինքն՝ դրանով հանդերձ, որ մեր

գործը դժարանում է, բայց մեր նպատակն այն է, որ այդ սահմանամերձ փոքր քաղաքների ու գիւղերի դպրոցներին օգնենք: Դրանց աշակերտութեան թիւը բնականաբար աւելի փոքր է, ասենք 50-100 կամ 150 հոգի՝ 10-12 դասարանների մէջ:

**-Ինչպե՞ս էք ձեր գործը կատարում, ասենք, դրա՞նք տալիս թե՞ գործնականում էլ ղեկավարում էք:**

-Դրանք հաւաքում ենք: Մենք նախապէս դպրոցների ցանկն ունենք, թէ ո՞ր դպրոցները կահոյքի

մածայն որի հաստատում է, որ մենք նրանց յանձնել ենք այսքան աթոռ-սեղան: Մի շարք պայմաններ էլ կան, օրինակ այն, որ չի կարելի փոխել կամ վաճառել դրանց: Այդ պայմանագիրը ստորագրւում է, կնքւում եւ մէկ օրինակն էլ ուղարկում է նւիրատու անձի համար: Մենք ապրանքները թէ յանձնելուց առաջ եւ թէ յետո՞ն նկարում եւ այդ նկարները յանձնում ենք նաեւ նւիրատուին, որպէսզի նա էլ իմանայ թէ ո՞ր դպրոցն է եղել, իսկ ցուցակի մէջ նշանակում ենք նւիրատուի անունը: Դպրոցում էլ մի ցուցատախ-

վարութիւնը մեզ այդ իրաւունքը տւել է, որ յիշեալ ապրանքները ներկրենք առանց մաքս մուծելու եւ միայն օգտագործել աթոռ-սեղան պատրաստելու, եւ ոչ այլ նպատակով:

**-Ուերմն այս ողջ աշխատանքը պիտի կազմակերպւի մի գրասենեակի կամ անձնաւորութեան միջոցով:**

-Մեր գործավարը Հայաստանում բոլոր գործերին դպրոցի վերաբերեալ հետեւում է: 2003 թւականից մինչեւ հիմա, մեր աշխատանքը համարեա թէ մօտ ապագայում



պահանջ ունեն, այդ ցանկը, որ մեր գործավարն է պատրաստում եւ մեր կայքէջում էլ կայ, ցոյց է տալիս, որ մօտ 10-15 դպրոցներ օգնութեան կարիք ունեն, թէ ինչքա՞ն է նրանց աշակերտութիւնը, քանի՞ դասարան ունեն, եւ քանի՞ աթոռ-սեղանի կարիք ունեն: Դրանք, որ հաւաքւում է, մենք ուղարկում ենք Հայաստան, որտեղ պայմանագիր ունենք մի արտադրողի հետ, որը աթոռ-սեղան է պատրաստում՝ յատուկ ստանդարտներով, յետոյ դա յանձնւում է դպրոցի տնօրինութեանը, որն էլ ստորագրում է փաստաթուղթ, հա-

տակ է փակցւում, որի վրայ նշւում է «Հայ դպրոց»-ի եւ նւիրատուի անունը:

Այս նպատակով ունենք մի շարք դժուարութիւններ, օրինակ որոշ հում նիւթեր դրսից պիտի ներկրւի Հայաստան. օրինակ երկաթը պիտի ուղարկենք Պարսկաստանից, կամ MDF փայտը՝ Չինաստանից. իհարկէ MDF փայտը ներկւած ենք գնում՝ երեք գոյնով՝ դեղին, կապոյտ եւ կանաչ, որը տարբեր տարիքի աշակերտների աթոռ-սեղանի համար է: Այս ապրանքները ստանալուց յետոյ պահեստներում պահւում են. իհարկէ կառա-

մինչեւ 200-դպրոցի կը հասնի, եւ պէտք է ասել, որ դա շատ հեշտ ու փոքր գործ չի եղել: Կարող եմ ամենայն հպարտութեամբ ասել, որ մենք օգնել ենք շուրջ 18-19-հազար աշակերտութեան մի քանի անգամ աշխատել ենք ուրիշ կազմակերպութիւնների հետ եւ միացեալ ջանքերով, օրինակի համար՝ եթէ կազմակերպութիւնը չէնքը նորոգի, մենք էլ կահոյքները հայթայթենք, բայց դեռ չենք յաջողեցրել, բայց ուրիշ կազմակերպութիւններ մեծածաւալ մեծ դպրոցների վերանորոգման վրայ աշխատում են, որը ուրախալի է:



Իհարկէ նրանք միայն դպրոցները նորոգում են, բայց նրանց շեշտը մեծ դպրոցների վրայ է, օրինակի համար 500-600 հոգանոց դպրոցների: Մեր խնդիրը մի քիչ տարբեր է եւ մի տեսակ սիմբոլիկ բնոյթ ունի: Փոքր գիւղերի մէջ դպրոցը համայնքի սիրտն է, եւ երբ դրսից գալիս եւ մի քիչ ուշադրութիւն ես դարձնում, դա կարծես յիշեցնում է նրանց, որ դեռ չեն մոռացել, համարեա նրանց նոր կեանք ես տալիս:

**-Այո՛, դա մեծ ազդեցութիւն ունի. փակագծերի մէջ ասեմ, որ երբ փոքր էինք Գիւլբենգեանի ֆոնդի կողմից Պարսկաստանում դպրոցների համար աթոռ-սեղան բերեցին եւ միանգամից հին ու ջարդուած աթոռ-սեղանները նորոգւեցին, դա բոլորին ուրախութիւն բերեց:**

-Այո, մի բան էլ կայ, դպրոցն այդ համայնքի, գիւղի սիրտն է, երբ մի քիչ կարեւորութիւն է տրուում նորոգմանը, կարծես թէ մի էներգիա է սրսկւում:

**-Այս աշխատանքների վերաբե-**

**րեալ արդեօք հետաքրքրութիւնը մեծացե՞լ է թէ՞ ընդհակառակը՝ պակասել է:**

-Նախկինում այդ աթոռ-սեղանը կառավարութեան կողմից էր տրուում դպրոցներին, Երեւանի դպրոցները աւելի մեծ ուշադրութեան էին արժանանում, որովհետեւ աւելի շատ մարդ կար, ընդհակառակը՝ փոքր քաղաքների ու գիւղերի դպրոցներին յատուկ ուշադրութիւն չէր դարձւում, եւ դա կապուած էր նրանց տնօրէններին թէ ինչքան ճարպիկ լինէին, գնային պահանջէին եւ ապրանքը ստանային: «Յայ դպրոց» հիմնադրամը դրսի մարդկանց ասում է թէ՛ եթէ ուզում ես Յայաստանին օգնել, կարիք չկայ 10.000 դոլար նւիրել, եւ կարելի է միայն օրինակ 10-20 դոլարով մի աթոռ-սեղան գնել երկու հայ աշակերտների նստելու համար: Գաղափարն այստեղից է ծագել, սակայն այդ ձեւն էլ իր դժւարութիւնն ունէր, չէր լինի մէկ աթոռ-սեղան նոր լինէր եւ միւսները՝ հին, ուրեմն որոշեցինք մի դասարան անել, բայց դա էլ չեղաւ. յետոյ դրան հաւաքեցինք.

առաջ շեշտը մէկ սէթ աթոռ-սեղանի վրայ էր, բայց տեսանք թէ միայն դրանով ոչ մի տեղի չենք հասնի, որովհետեւ չէր լինի թէ 5 հատ աթոռ-սեղան գնել ու ասել թէ գործն աւարտեց, մօտեցումը փոխեց: Յիմա դպրոցի վրայ ենք կենտրոնանում ոչ թէ միայն մէկ աթոռ-սեղանի: Այսինքն դրանը հաւաքում ենք մինչեւ մի դպրոցի կահաւորմանը բաւարարի:

**-Ինչպէ՞ս են ընդառաջում Ամերիկայում: Ովքե՞ր են աւելի շատ ընդառաջում:**

-Ամերիկայում, հիմա կարող եմ ասել, որ մենք պարսկահայութեան մէջ աւելի ճանաչում ունենք, որովհետեւ ինքներս մեր շրջանի մէջ ենք եղել: Վերջին 2-3 տարւայ մէջ բաւական ուժեղացել ենք, կայքէջը, որ ունենք բաւական օգնում է մեզ, որ դրսից էլ ճանաչեն մեզ ու տեսնեն թէ ինչ է կատարւում, ինֆորմէյշնը, որ նախկինում հեշտ չէր, հիմա հանգիստ տրուում է, թէ քանի դպրոցի ինչքան եւ ովքեր են օգնել: Ներկայ վարչութեան մէջ կարողացել ենք

մի շարք ոչ պարսկահայերի աշխատանքի հրավերել: Բայց մի բան պետք է չմոռանալ, որ Ամերիկայում հայկական մեծ կազմակերպություններ շատ կան, որ գանազան նպատակներով ծառայում են թե՛ համայնքին եւ թե՛ Հայաստանին, ուզենանք թե ոչ մի քիչ մրցակցութեան մէջ ենք ուրիշ կազմակերպությունների հետ, բայց, քանի որ մերը կրթական ոլորտի մէջ է եւ արդիւնքը շոշափելի է մարդկանց համար, այսինքն՝ մարդ կարող է տեսնել թէ ինչքան դրամը քանի աթոռ կամ սեղան է դարձել. դա մի առաւելութիւն է մեզ համար:

Մենք ցանկանում ենք, որ մեր շրջանակը մեծանայ, կը սիրենք Գլենդէյլից դուրս ուրիշ համայնքների մէջ էլ ներկայ լինենք, բայց կամաց-կամաց. սա կամաւոր աշխատանք է: Աշխատում ենք ծախսերի մէջ խնայել, պակսեցնել. այդ աշխատանքների շատ փոքր ու քիչ տոկոսն է գնում մեր կազմակերպչական ծախսերը փակելու համար:

Բոլորս այս կազմակերպութեան մէջ աշխատում ենք կամաւոր եւ առանց ռոճիկի. «Հայ դպրոց»-ը միայն մէկ անձնակազմին ունի, որ ռոճիկով է աշխատում եւ դա էլ Հայաստանի մեր գործավարն է: Ուզում ենք աւելացնել, որ եթէ մենք 18-19 հազար աթոռ-սեղան ենք պատրաստել, այդ բոլորը մարդկանց նւիրատութեանից է, մենք միայն կապ ենք եղել դպրոցների եւ մարդկանց միջեւ: Մի շարք մարդիկ կարծելով թէ մենք աթոռ-սեղանի գործարան ունենք, սխալմամբ զանգահարել եւ աթոռի պատուէր են տւել: Սակայն իրականում մենք այդ գործի մէջ չենք եւ միայն դպրոցների աթոռ-սեղանի գործի մէջ ենք. սրա մէջ մեծ

տարբերութիւն կայ, բայց երբեմն մարդիկ չփոթում են:

**-Շատ լաւ միտք է այդպէս օգնելը, թե՛ տեղ է հասնում օգնութիւնը եւ թե՛ շոշափելի է:**

-Սկզբում մի քիչ գործը երկար էր տւում, բայց հիմա երբ դրամը վճարում են «Հայ դպրոց»-ին, մինչեւ 3-ամիս պատուէրը պատրաստ է եւ արդիւնքն ստացւած եւ արդէն երեխաները նստած են նոր նստարաններին:

**-Կարո՞ղ էք ասել թէ իւրաքանչիւր աթոռ-սեղանի գինը ինչքան է:**

-Մէկ սեթ աթոռ-սեղանը, որը բաղկացած է մէկ սեղանից եւ 2 նստարանից 95 դոլար է վերջանում, որը շատ որակով ու յարմար գին է: Եթէ ասենք մէկ դպրոց ունի 100 աշակերտ, ու կարիք ունի 50 նստարանի, ուրեմն գումարն կլրացրած 5000 դոլար է լինում:

**-Արդեօք Հայաստանի Հանրապետութեան կողմից որեւէ դժարութիւն կան ասենք խնդիր առաջացնել է թէ ո՞չ:**

-Բարեբախտաբար ոչ մի դժարութիւն մինչեւ օրս չի պատահել. մենք ամէն տարի կառավարութեանը զեկոյց ենք ներկայացրել եւ նրանցից քաջալերութիւն ու գնահատական ստացել: Իմիջիայլոց մենք հնարաւորութիւն ունենք օգտւել մաքսազերծումից. միայն կառավարութեան պայմաններից նա է եղել, որ մենք աւելի շուտ կահաւորենք փոքր դպրոցները փոքր գիւղերում կամ համայնքներում, որոնց ամէն մարդու ձեռքը չի հասնի օգնելու: Կառավարութիւնն ինքը մեծ համայնքի ու մեծ դպրոցների կարիքներն հայթայթում է:

**-Վերջում խնդրեմ ասեք ձեր ապագայ ծրագրերի մասին:**

-Ասեմ, որ մենք շուտով պետք է լրացնենք մեր 10-ամեակն եւ արդէն 1-2 տարի է թէ խօսում ու մտածում ենք թէ գալիք տարիների համար ինչ պիտի անել. այս տարիների ընթացքում շուրջ 200 դպրոցից աւել կահաւորել ենք եւ համարեա թէ տարիների փորձառութիւն ենք ձեռք բերել եւ գիտենք թէ որոնք են այս ոլորտի պահանջներն ու խնդիրները:

Օրինակ մանկապարտէզների եւ մանկամտօրների կապակցութեամբ, որ Հայաստանում զարկ է տրւում թէ վերջերս երեխաներն անպայման մանկապարտէզ գնան, մենք աշխատում ենք ջանք դնել այդ մասին, իհարկէ դեռ ոչ մի բան չենք կատարել, բայց զգում ենք, որ այդտեղ էլ անելիք ունենք:

Դպրոցների խաղավայրի, մարզասահների եւ ֆիզիկայի ու քիմիայի լաբորատորիաների պիտոյքների վերաբերեալ կարծում ենք, թէ կարող ենք օգնել: Նաեւ մտածում ենք հաշտեփակումի համար համակարգիչ ուղարկել Ամերիկայից Հայաստան, որ յոյս ունենք, որ շուտով այս աշխատանքները կը կատարենք եւ այս ասպարէզում մեծ քայլեր կը վերցնենք: Կան մարդիկ, որ հետաքրքրւած են օրինակ մանկապարտէզի, կամ լաբորատորիայի հարցերով, որը կարող են օգնել այս կապակցութեամբ..

**-Վերջում շնորհակալութիւն յայտնելով, յաջողութիւն ենք մաղթում Ձեզ, Ձեր ազգանւեր այս աշխատանքում: Վստահ ենք, որ մեր ընթերցողներին այս տեղեկութիւնները շատ կը հետաքրքրեն եւ կը գտնւեն շատերը, որ պատրաստ կը լինեն Ձեզ աջակցելու:**

 **ԱՅՅԵԼԷՔ «ՀԱՅ ԳԴՐՈՅ»-Ի ԿԱՅԸԸ՝**  
**www.armeniaschoolfoundation.org**

# ԼՌՈՒԹԻՒՆԸ ԻՆՉԻ՞ ՆՇԱՆ Է

Ազատ Սաթեան



**Տ**ասնամեակներ շարունակ ազգային ունեցածքը պահել է «չար աչքից» հեռու, իսկ դրանց հետ կապված գործարքների մանրամասները համարել են «պետական» գաղտնիք: Գործադիր թեմական եւ կրօնական խորհուրդների, ինչպէս նաեւ հաշվեքննիչ մարմինների տարեկան միութարոյական զեկոյցները մնում էին փակ դռների յետեւում եւ նոյնիսկ պատգամաւորներին չէր թուլատրուում դրանք դուրս հանել ժողովներից, իսկ, թէ ինչքանով էին այդ զեկոյցները արտացոլում իրական պատկերը, այլ հարց է:

Յեղափոխութիւնից յետոյ շուրջ 20 տարի ընտրութիւններ տեղի չունեցան, եւ ազգային գործերը շարունակոււմ էին վարել նախկին կազմերը:

2000 թին, վերջապէս ընտրութիւնների իրաւունք տրւեց եւ Ջուղայում ներկայացած երկու ցանկերից համամասնական կարգով ընտրւեց 47-րդ պատգամաւորական ժողովը: Տողերիս գրողը եւս երկրորդ փոքրամասնութեան ցանկից ընտրւեցի պատգամաւորական ժողովի անդամ: Այստեղ ուզում եմ վկայել, որ այդ եւ դրան յաջորդող պատգամաւորական ժողովները շատ էին տարբերոււմ նախորդ շրջաններից: Հէնց համամասնական ձեւը նորութիւն էր եւ համարոււմ էր յետյեղափոխական շրջանի նւաճում: Նիստերը անցնում էին բուռն քննարկումներով, որոնց ընթացքում ցանկ մէկի մեծամասնութեան երիտասարդ դաշնակցական անդամները ցուցաբերոււմ էին քննադատական մօտեցում խղիւրներին եւ նրան-

ցից ոմանք նոյնիսկ տարակուսանք էին յայտնոււմ երկրորդ ցանկի պատգամաւորների մեղմ կեցւածքի մասին: Նրանցից մէկը նոյնիսկ հասաւ այն բանին, որ ազգային մարմինների գործելակերպը ընդհանրապէս հռչակեց դաւաճանութիւն եւ կոչ արեց յեղափոխական քայլերի: Թէեւ պարզ չէր, թէ կոնկրետ ինչի մասին է խօսքը, բայց այս բոլորը նորութիւն էր ինձ համար, որ տարբեր ժամանակներում եղել էի ժողովներում: Նկատելի էր կուսակցութեան ներսում սերմնափոխութեան միտում: Նկատելի էր նաեւ հանդուրժողականութեան տրամադրութիւն, ինչը իսպառ վերացել էր յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ Ջուղայում բարձրացած ժողովրդական բողոքի բուռն շրջանից յետոյ: Կար նաեւ այն, որ Հայաստանի անկախացումից շուրջ տաս տարի յետոյ դաշնակցականները հրաւիրել էին միասնականութեան սեմի-

նար: Մի խօսքով, ինչ-որ բան փոխել էր եւ իրավիճակը յոյս էր ներշնչում, որ ամէն ինչ գնալու է դէպի լաւը, բայց, թարսի պէս, մի քանի մեծագոյն սխալներ կատարուեցին հէնց այս շրջանում, որոնցից կարելի է նշել Թոհիդ պողոտայի եւ մի քանի այլ հողամասերի միատեղ վաճառքը, Հայաստանում կատարած ներդրումները, Սաէր Սէյրը, Ակումբի նորոգութիւնը, գերեզմանատան կից հողամասի մասնատման ձախողած ծրագիրը, Ղարաբաղի վերաբնակեցման ծրագիրը, ութ յարկանի շէնքի կառուցումը, նոր կրթական եւ մարզական համալիրների կառուցման առնւազն վիճելի նախագծերի իրագործումը, բնակարանաշինութեան ասպարէզում թոյլ տրւած վրիպումները, բազմաթիւ ընդունւած, բայց չիրականացւած որոշումները եւ այլն:

Շուրջ վեց տարւայ իմ ներկայութեամբ սոյն ժողովներին ես եկայ այն եզրակացութեան, որ ախտաճանաչման տեսակետից ՊԺ-ը գրեթէ ոչ մի պակաս չունի, աջ թէ ձախ, ցանկ մէկ, թէ ցանկ երկու, բոլորն անխտիր դժգոհում էին իրավիճակից եւ այն գտնում ճգնաժամային, իսկ երբ բանաձեւային յանձնախումբը, որի անդամն էի նաեւ ես, փորձեց այդ բոլոր դժգոհութիւնները բանաձեւել եւ մանաւանդ իր ներկայացրած բանաձեւում օգտագործեց «ճգնաժամ» բառը, ժողովը ընտրեց մի ամբողջ յանձնախումբ, որպէսզի քննարկի իրավիճակը եւ լուծումներ գտնի, բայց որն իր պարտականութիւնը կատարեց սոյն «չարաբաստիկ» բանաձեւը «բարեփոխելով», որովհետեւ, ըստ ոմանց, վիճակն այնքան էլ վատ չէր, եւ չէր կարելի նման բացասական փաստաթուղթը ներկայացնել Վեհափառին կամ որեւէ մէկին: Իսկ թեմական խորհրդի նախագահը յայտարարեց. «ճգնաժամ չկայ, ութ յարկանի շէնքը, որ ծախսեմք, դեռ 20

տարի կապրենք»: Եւ այսպէս արդէն մի քանի տասնամեակ է, որ թեմը գոյատեւում է անցեալի հաշիւին: Վաճառւած են հսկայական հողամասեր, եւ ընթացքը շարունակում է: Հայաստանում կալւածները յայտնել են արագօրէն զարգացող քաղաքի կենտրոնում, իսկ դրանք շահութաբեր դարձնելու ծրագրերը կամ մնում են արխիւներում կամ իրագործւում են մեծ վնասներով: Համայնքը նոսրանում է քանակով եւ որակով: Նոր դպրոցական եւ մարզական «համալիրների» կառուցումը նման է այն գիւղացուն, որն իր եզները վաճառում է մի քանի գիշեր հինգ աստղանի հիւրանոցում գիշերելու համար:

Հետաքրքիրն այն էր եւ է, որ բոլորն անխտիր, սկսած տասնեակ տարիներ ամենապատասխանատու պաշտօններ զբաղեցրած մարդկանցից մինչեւ համայնքի շարքային անդամը կողմնակի գրոյցներում մեղքը բարդում են ինչ-որ երրորդ անյայտ էութեան կամ գոյութեան վզին, այսպէս են անում, - բայց ոչ ոք պատրաստ չէ յանձն առնել պատասխանատութեան իր բաժինը:

«Յոյս» երկշաբաթթերթի համար 104-ում լոյս տեսած Հրաչ Միրզախանեանի ծաւալուն յօդուածը մօտաւոր պատկերացում կարող է տալ վերոնշեալ գործարքներից մի քանսի մասին: Ասում ենք մօտաւոր, որովհետեւ ուսումնասիրութիւնը, որն, ի դէպ, իր տեսակի մէջ կարելի է համարել աննախընթաց, հիմնւած է Սպահանի Հայոց Առաջնորդարանի զեկուցագրերի ժլատ տեղեկութիւնների եւ մի շարք ակնյայտ փաստերի վրայ, իսկ իրական պատկերը, որը շատ աւելի անմխիթարական է, կարիք ունի աւելի լայն տեղեկութիւնների ու լուրջ հաշիւներով: Սակայն նման հաշիւներում եւ հաշիւտութեան համար գոյութիւն չունի ոչ

մի մեխանիզմ, հետեւաբար որեւէ հարցադրում, արդարացի, թէ անարդար հանդիպում է պատասխանատուների, լռութեան պատին:

Ասում են լռութիւնը համաձայնութեան նշան է: Այդ դէպքում այս լռութիւնը նշանակում է հետեւեալը. «Այո, այդպէս է, յետոյ ի՞նչ»: Յետոյ ոչինչ: Հողամասերը վաճառւած են, ութ յարկանի շէնքը կառուցւած ու վաճառւած է, ակումբը նորոգւած ու դուռը փակւած է եւ այսպէս շարունակ:

Մի շէնքի նորոգութեան համար ՊԺ-ը քւէարկել էր ԹԽ-ի կողմից առաջարկւած մէկ միլիոն թուման բիւջէ: Թեմականը տարեկան զեկոյցում ներկայացրեց 15 միլիոն թուման ծախս: Ժողովականի հարցին ԹԽ նախագահը պատասխանեց. «Պէտք է եղել, ծախսել ենք, չէք ուզում, կը քանդենք»: Եւ ժողովը հանգիստ կուլ տուեց վիրաւորանքը:

Սա մի փոքրիկ օրինակ է, իսկ պարսկական առածն ասում է. «Մոռոք նեմունէյէ խարարէ»:

Այստեղ լռութիւնը միայն համաձայնութեան նշան չէ, դա նաեւ արհամարհանք է, իբր թէ դուք ո՞վ էք, որ մենք ձեզ պատասխանենք: Բայց լռութիւնը նաեւ վախի նշան է, որովհետեւ ամէն մի պատասխան կարող է տասնեակ նոր հարցեր առաջացնել, դեհ, արի ու այդ բոլորի տակից դուրս արի:

Իսկ ո՞վ է պատասխանելու: Մեր իշխանաւորները յաճախ իրենց պահում են երկնային արարածների նման, որոնք պարզ մահկանացուների հետ երկխօսութեան մէջ մտնելու տրամադրութիւն ամենեւին չունեն: Իսկ եթէ իրենց ճակատին կրում են նաեւ գաղափարական առաջնորդի լուսապսակ, ուրեմն վեր են կանգնած ամէն դատ ու դատաստանից:



# ՔԱՐՄԷՆ ԱԶԱՐԵԱՆԻ ԵՆՈՅԹԸ Հ.Մ.Մ. «ՐԱՖՅԻ» ՀԱՄԱԼԻՐԻ ՄՇԱԿՈՅԹԻ

## ՕՐԻԱՅ ԶԵՌՆԱՐԿՈՒՄ (ՀԱՏԻԱԾ)

### ՄԵՐ ՄՇԱԿՈՅԹԻ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ԴԱՆԸ

...Իրօք պահը բարդ է եւ ճակատագրական: Փաստօրէն նւագել ենք թէ քանակով եւ թէ որակով: Մեր համայնքը վերջին տասնամեակների ընթացքում քանակապէս հետեւաբար եւ որակապէս տանուլ տուեց եւ կորցրեց շատ բաներ, որոնք ստեղծել էին դարերի ընթացքում: Երկրի հայաշատ գաւառներից շատերը հայաթափուեցին եւ նրանց ստեղծած միւթական ու հոգեւոր հարստութիւնը անհետ կորաւ: Նրանց տնտեսութեան հետ, բնականաբար քայքայուեց ու աստիճանաբար մոռացութեան մատնուեցին նրանց խօսակցական լեզուն՝ բարբառը, նաեւ սովորութիւններն ու յատուկ աւանդոյթները, ոչնչացան ճարտարապետական ժառանգութիւնը՝ յատկապէս լքած եկեղեցիները, սրբավայրերը, ...

Այսօր եւս մեր աչքերի առջեւ նոյն կերպ հայաթափ լինելով այս եւ այն քաղաքը, մեր տնտեսական ու մշակութային ժառանգութիւնը գնալով փոքրանում ու փոքրանում է: Մի բան, որ մեր ազգային մարմիններին պարտադրել է կիրառել յատուկ քաղաքականութիւն՝ «օպտիմալացում եւ վերադասաւորում» անւան տակ: Փակուում են մեր նախնիների մեծ ջանքերով կառուցւած դպրոցները, որի հետ ի դէպ մենք չենք կարողանում հաշտուել: Սակայն չի կարելի անտեսել այն, որ մեր դպրոցների աշակերտութեան թիւն այնքան է պակասել, որ անիմաստ ու անխոհեմ քայլ կը լինէր մեր կողմից դրանց դուռը բաց պահելը: Այնուամենայնիւ մեր պարտքը դրանով աւարտուած չի կարելի համարել: Եթէ փակոււմ ենք մի դպրոց, ուրեմն պէտք է անպայման ներդրում կատարել միւս աշխա-



տող դպրոցների վրայ, ինչպէս կատարուեց «Թունեան» դպրոցի պարագայում, եւ նրանց գինել նորագոյն տեխնոլոգիայով, լաւագոյն, արհեստավարժ մասնագէտ ուսուցիչներով ու անձնակազմով: Դրա շնորհիւ գոնէ կապահովենք մնացողների բարձր մակարդակը՝ թէ որակով եւ թէ թւով: Զէ՞ որ մեր դպրոցների անորակ լինելու պատճառով շատերը գերադասում են իրենց երեխաներին պարսկական դպրոցներ ուղար-

կել: Ուրեմն մեր պարտքն է առաջին հերթին մեր ազգային հարստութիւնը ծառայեցնել մեր դպրոցների, ապա եւ միութիւնների հնարաւորութիւնների զարգացմանը: Յատկապէս հայեցի դաստիարակութեան եւ հայոց լեզուն փրկելու համար, ելնելով համայնքի ընդհանուր շահերից, անհրաժեշտ է անկախ քաղաքական նկատառումներից եւ զուտ մասնագիտական դիտանկիւնից վերանայել մեր կարծր դիրքորոշում-

ները մի շարք կարելու հարցերում, օրինակ ուղղագրութեան վերաբերեալ: Եթէ առ այսօր շատ կարելու է համարել թէ «յաջողութիւն»-ը j-ով է գրուում թէ h-ով, կամ «կարօտ»-ը o-ով է գրուում թէ ո-ով եւ հայոց լեզուի ուսուցման գործում մեծ ուժ է խլել երեխային սովորեցնելու անսխալ գրելը, այսօր ըստ իս գլխաւոր նպատակ պիտի դարձնել նախ երեխային սովորեցնել այդ «յաջողութիւն» կամ «կարօտ» բառը ճիշտ եւ տեղին գործածել, հարստացնել նրա բառապաշարը եւ մի խօսքով զարգացնել նրա խօսելու ունակութիւնները: Բնականաբար պէտք է ինչքան շուտ տեղի մասնագետների համագործակցութեամբ որոշում կայացնել ուղղագրութեան վերաբերեալ, որի կարելուութիւնը տարիներ շարունակ, ասես թէ անտեսել է համայնքի ղեկավարութեան կողմից: Հայաստանի անկախացումից յետոյ ստեղծուած պայմաններում, որով արեւելախօս իրանահայութիւնը առաւել քան որեւէ այլ համայնք կարող է մշակութային սնունդ ստանալ հայրենիքից, ուղղագրութեան զանազանութիւնը խոչընդոտ է հանդիսանում այդ ուղղութեամբ: Ներկայ շփումների ընթացքում յատկապէս մեր երեխաների համար հարց է առաջանում թէ ինչո՞ւ են նրանք մեզանից տարբեր գրում: Եւ մենք ի՞նչ պատասխան ունենք տալու: Ինչպէ՞ս բացատրենք այդ երկակի գրութեան պատճառը: Եւ մինչ մենք մտածում ենք, կամ գուցէ բոլորովին չենք էլ մտածում, մեր երեխաները իրենց գործը օրեցօր հեշտացնում ու կամաց-կամաց, աննկատելիօրէն անցնում են դիւրահաս պարսկերէնին կամ լաւագոյն դէպքում թէ բանաւոր եւ թէ գրաւոր խօսքում սխալներով լի հայերէնին:

Պարզ է, որ ժամանակները փոխել են եւ ակնյայտ է, որ ներկայ պայմաններում, արդէն 400-ամեայ գոյութեան փաստը կրկնե-


լով ու անցեալի փառքը բարձրածայնելով չենք կարող դաստիարակել ու ազգային ոգով սնուցանել մեր նոր սերնդին, որը գուցէ չի տիրապետում հայոց լեզուին ու գրականութեանը, բայց եւ այնպէս իր հերթին հետաքրքրուած է նորագոյն տեխնոլոգիաներով ու միջազգային թեմաներով, եւ դրա միջոցով կարող է տիրապետել այն ողջ գիտելիքին, որին հասնելը այնքան էլ հեշտ չէր նախորդ սերունդների համար: Մի խօսքով պէտք է ընդունենք, որ նոր ժամանակները նոր զէնքեր, նոր ձեւեր են պահանջում: Այլեւս հնացած, Տէր Թողիկեան մեթոդներով ու վերաբերմունքով չենք կարող կրթել ու դաստիարակել մեր երեխաներին: Այս նպատակով անհրաժեշտ է վերապատրաստել թէ մեր ուսուցիչներին եւ թէ դասագրքերը:

Հարկաւոր է իւրաքանչիւր պաշտօնի համար ընտրել համապատասխան ու պրոֆեսիոնալ անձին, թէկուզեւ ոչ հայ, եւ չբաւարարել լոկ նրա «ազգին նւիրածութեան», «վստահելի ընտանիքի զաւակ» կամ այսինչ միութեան անդամ լինելու եւ նման այլ երկրորդական յատկանիշներով եւ միշտ առաջին տեղը տալ պրոֆեսիոնալիզմին՝ հրաժարելով սիրողական գործելաճից: Միայն այդպէս կարող ենք ապահովել գործի կատարելութիւնը, խոյս տալ հնարաւոր թերացումներից ու ամենուր նկատուող թափփուածութիւնից: Որպէս օրինակ կարող ենք յիշել թէկուզ վերջին Համահայկական խաղերը, որի շուրջ ասէկոսէները դեռ շարունակուում են: Նման վերաբերմունքով ոչ միայն հիասթափուում է մարզիկն ու մարզիչը, այլեւ յօդս է ցնդում մեծ թով ազնիւ ու գործին նւիրած մարդկանց, այսինքն կազմակերպիչների ողջ աշխատանքի արդիւնքը:

Այս բոլորով հասնում ենք այն եզրակացութեան, որ օպտիմալացումն ու վերադասաւորումը

պէտք է գործի ոչ միայն մեր նիւթական, այլ նաեւ հոգեւոր հարստութեան վերաբերեալ: Պէտք է մեր դպրոցները եւ այլ հաստատութիւնները առաւելագոյնս ծառայեն հայ մշակոյթի տարածման ու զարգացման գործին: Պէտք է մատաղ սերնդին մատուցանել կրօնը, մայրենի լեզուն ու գրականութիւնը արւեստներն ու աւանդոյթները նորագոյն մեթոդներով ու յարմարանքներով, օրինակ՝ խտասկաւառակներով (Սի-Դիներով) ու ֆիլմերով, շրջագայութիւններով ու այցելութիւններով եւ այլն: Պէտք է նրան ծանօթացնել հայ գրականութեանը, պատմութեանը, ժամանակակից երգարւեստին, թատրոնին, պարին, եւ այլնին, բարձրացնելով նրանց վայր ընկած ճաշակը, որով մի կողմից նրանց կապահովագրենք օտար, յատկապէս ցածրորակ չարւեստի դէմ, եւ միւս կողմից նրանց հոգիները կը լցնենք հպարտութեամբ իր ազգայինի հանդէպ:

Վերջում ուզում են յիշեցնել, որ մատաղ սերնդի դաստիարակման գործում գլխաւոր դեր է կատարում ընտանիքը, հետեւաբար պարտաւոր ենք առաջին հերթին ուղղել մեզ եւ մեր կեցածքով օրինակ հանդիսանալ մեր երեխաների համար, որոնք մեր ապագան են կերտելու: Այսինքն այս գործում որոշիչ դեր է վերապահուած բոլորիս՝ անհատ առ անհատ, որպէս հասարակ քաղաքացիներ: Բոլորս պիտի միշտ ու անդադար աշխատենք այդ ուղղութեամբ, սովորենք ճիշտն ու անսխալը, ձգտենք լաւագոյնին ու բարձրագոյնին՝ անկախ տարիքից, եւ նոյնը փոխանցենք մեր երեխաներին: Այդպիսով միայն կարող ենք ունենալ զարգացող սերունդ, զարգացող կառոյցներ՝ դա թող լինի դպրոց թէ միութիւն կամ ազգային մարմիններ, եւ մի խօսքով բարձր մակարդակով համայնք:



# ԹՈՄԱՍ ԹՐԱՆՍԹՐԻԻՄԵՐ 2011 ԹԻԱԿԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒԵԱՆ ՆՈՔԵԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐ

Շանթ Բաղրամեան

Նրանք հանգցրին ճրագները, կիսամութ էր... Առկայծներ եղան վայրկեանների համար, նրանք էլ մթնան՝ Ինչպէս դեղահատը մթութեան բաժակում, եւ հիւրանոցի պատերը սեւ երկինք բարձրացան:

Սիրոյ շարժումները իրենց տեղը գտան, նրանք ննջում են: Բայց նրանց թաքուն մտքերը հանդիպեցին՝ Ինչպէս գոյներն են հանդիպում միմեանց ու միաձուլւում Դպրոցական տղայի նկարչութեան թաց թերթիկի վրայ:

Մութ էր ու լուռ: Սակայն քաղաքն այս գիշեր աւելի մօտ էր՝ Տենչանքով լի պատուհաններով ու տները իրար էին մօտենում Կանգնում իրար կողք, խտացած ու սպասում էին՝ Նրանց դէմքերում արտայայտութիւն չկար...

Վերի տողերի հեղինակը շեղացի 80-ամեայ բանաստեղծ՝ Թոմաս Թրանսթրիւմերն է, որը արժանացաւ 2011 թականի Նոբելեան մրցանակին:

Նոբելեան մրցանակի յանձնախումբը, Դոկտեմբերի 6-ին, Ստոկհոլմում, մրցանակի յաղթող ճանաչեց՝ Շեղիայի եւ անգամ ամբողջ սկանդինաւեան երկրների ամենահանրայայտ պոետին որպէս այս տարւայ մրցանակակիր: Յանձնա-

խումբը իր պաշտօնական յատարարութեան մէջ Թրանսթրիւմերի մասին ասել է՝ «Իր խտացած, կիսաթափանցիկ պատկերների միջոցով, մեզ նորովի է մատուցում իրականութիւնը»:

1931 թականի Ապրիլի 15-ին Ստոկհոլմում ծնւած բանաստեղծը մասնագիտութեամբ հոգեբոյժ է, նաեւ գերագանց դաշնակահար: Նրա գրածքները թարգմանւել են յիսունից աւելի լեզուների: Նա բանաստեղծութիւնների ու արձակ երկերի 15 գրքերի հեղինակ է եւ Գերմանիայի «Փետրարքայ» մրցանակի դափնեկիր:

Շեղիայի ակադեմիայի քարտուղար Փիթեր Ինքլունդը նրա մասին ասում է՝ «Թոմասը գրում է 1951-ից ի վեր, եւ դրանով հանդերձ, որ նրա գրածքները մեծ թիւ չեն կազմում, բայց նա գրում է մեծ հարցերի մասին, ինչպիսիք են՝ մահը, յիշողութիւնը, պատմութիւնը եւ բնութիւնը»:

Թրանսքրիւմների գործունէութիւնը, ընդհատուեց 1990 թ.: Արտիկաթւածի հետեւանքով, նրա մարմնի աջ կողմը անդամալոյծ

աշխարհին ծանօթացրեց Թրանսքրիւմներին, իսկ Ադոնիսը՝ սիրիացի յայտնի բանաստեղծը, նրա գործերը թարգմանել է արաբե-

ժական ոճի ու պատկերների վրայ՝ նրա տողերը մերթ սառնասրտօրէն են դրսեւորում, սակայն նրանց թաքուն շերտերում իմաստ է հանգչած՝ խորն ու զգայուն:

Վերջիվերջոյ գրականութեան 108-րդ Նոբելեան մրցանակը շնորհեց շեղացի թոմաս Թրանսքրիւմներին, որը 8-րդ եւրոպացին է, որ անցեալ 10 տարիների ընթացքում ստանում է այս մրցանակը: Գրաքննադատներն ու ակադեմիկոսները քննադատում են գրականութեան Նոբելեան մրցանակի ակադեմիային՝



դարձաւ ու խօսելը դժարացաւ: Այնուամենայնիւ բանաստեղծը չպարտեց կաթւածին ու սկսեց գրել ձախ ձեռքով ու անգամ շարունակեց դաշնամուր նւագել: Հետաքրքիրն այն է, որ նաեւ գտնուեցին երաժիշտներ, որ թոմասի համար յատուկ կտորներ գրեցին, որը կատարելի էր միայն ձախ ձեռքով: Մի խօսքով նա պարեց...

րէնի : Նրա ստեղծագործութիւններում առկայ է մութն ու սեւը, դառն ու դժարինը, բայց տողերի ծալքերից բուրում է յոյսն ու սէրը:

Շեղիայի բնութիւնն ու հասա-

այն հարցով, որ նրանք յաճախ են անտեսում եւրոպայից դուրս ստեղծած գրականութեանը: Բայց այնուամենայնիւ բոլորը այս տարի համաձայն են, որ եւրոպայի բանաստեղծութեան արքան արժանի է այս մրցանակին:

Մրցանակը թոմասինն է, ում տողերը ոչ թէ իմաստութեան խրատներ են, այլ իրականութեան ու մարդու գիտակցութեան շղկապը: Մրցանակը թոմասինն է, ով պատմում է երջանկութեան փխրուն լինելու մասին՝ ինչպէս ծառահատումը, կացինը ծառի բնում:

Մի մութ օրւայ աւարտին, Հայրըն են նւագում եւ ձեռքերումս մի քիչ ջերմութիւն զգում  
 Կլաւիէները պատրաստ են՝  
 Ձայնը վերացական է, կանաչ եւ լռութեամբ լի  
 Ձայնը ասում է թէ ազատութիւնը կայ...

Նրա բանաստեղծութիւնների ժողովածուներից կարելի է նշել «Պատուհանները եւ քարերը» /1972/, «Կիսատ մնացած դրախտը» /2001/ եւ վերջերս անգլերէնի թարգմանած «Մեծ առեղծածը» /2006/: Նրա բանաստեղծութիւնները համարում են արդիական, էքսպերսիոնիստական ու սիւռէալիստական ոճերի արդար ներկայացուցիչը:

Նրա տարիների ընկեր բանաստեղծ Ռոբերթ Բլայը անգլիախօս

րական կեանքը մեծ ազդեցութիւն է ունեցել նրա բանաստեղ-

Ես յենել եմ, ինչպէս ելարանն ու իմ դէմքը  
 Կեռասի ծառի երկրորդ յարկում է:  
 Ես գոյնների զանգի մէջ եմ, որը արեւաշողերով է զնգում  
 Թուխ կեռասներն են մաքրում, աւելի արագ քան թռչունները  
 Միանգամից, այս խանդավառ արեւոտ բացումից յետոյ՝ մթնում է  
 Միանգամից սարսուռ է գալիս ինձ հանդիպման հեռուններից...  
 Վայրկեաններն են մթնում  
 Ինչպէս կացնահարած ծառի բունը...

# ՏԵՍԵԼ ԹԱՏՐՈՆ, ԽՕՍԵԼ ԹԱՏՐՈՆ, ԼՍԵԼ ԹԱՏՐՈՆ

Լիլիթ Ամիրխանյան



Արդեն աւանդաբար այս տարի եւս «Չայֆեստ» միջազգային երեւանեան թատերական փառատօնը ազդարարւեց Չոկտեմբերի առաջին շաբաթը: Մէկ շաբաթ անընդմէջ՝ Չոկտեմբերի 1-ից 8-ը թատերասեր հասարակութիւնը վազվզում էր երեւանեան թատրոններով հասցնելու համար դիտել հնարաւորինս շատ ներկայացումներ: Թատերախմբեր էին եկել Չունգարիայից, Մեծ Բրիտանիայից, Իրանից, Ռուսաստանից, Իտալիայից, Լատվիայից, Բուլղարիայից, Չնդկաստանից եւ այլ երկրներից: Բացման արարողութիւնը տեղի ունեցաւ Ստանիսլաւսկու անւան դրամատիկական թատրոնի լեփ-լեցուն դահլիճում: Այս տարւայ «Չայֆեստ»-ի կարգախօսն էր «Տե՛ս թատրոն», «Լսի՛ր թատրոն», «Խօսի՛ր թատրոնից»: Փառատօնի նախագահ Արթուր Ղուկասեանի բացման խօսքից յետոյ «Չայֆեստ»-ը մեկ-

նարկեց հունգարական «Կապոյտ մարդիկ» ներկայացմամբ: Այն իրենից ներկայացնում էր կապոյտ հանդերձանքով երեք երիտասարդների թատերականցած ժամանակակից պար, որն իսկապէս գրաւեց հանդիսատեսին իր կատարողական արւեստի վարպետութեամբ:

Ստորեւ համառօտ կերպով կը պատմենք «Չայֆեստ 2011»-ի ներկայացումներից մի քանիսի մասին:

**Բուլղարիա-** «Կրեդօ» թատրոնի «Չայրիկը միշտ ճիշտ է» կատակերգութիւնը, որը բեմադրւել է Անդրեսենի հեքիաթներից մէկի հիման վրայ, մեծ արծազանք գտաւ հայ հանդիսատեսի շրջանում: Մի հրաշալի պատմութիւն պարուրած ծիւնով, որը պատմում է կեանքի փոքրիկ եւ կարելոր բաների մասին: Մի պատմութիւն տարեց մարդկանց մասին, ովքեր համբուրում են տօնի ժա-

մանակ, եւ այդ համբոյրը վերածուում է նրանց համար ամենաթանկ բանի: Այս յուզիչ պատմութիւնը յիշեցնում է, որ միայն սէրն է գեղեցկացնում այն ամէնը, ինչ շրջապատում է մեզ: Սիրով ներշնչւած հանդիսատեսը ներկայացման աւարտից յետոյ ծափահարութիւնների տարափը եւ բրաւօները երկար ժամանակ չէր դադարեցնում:

**Ռուսաստան-** Դոնի Ռոստով քաղաքից հանդէս եկաւ «Minicult» թատերական կենտրոնը «Ինչո՞ւ է Ջոն Լենոնը կիսաշրջազգեստ կրում» մոնօ-հոգեբանական ներկայացմամբ: Առաջին հայեացքից ներկայացման վերնագիրը կարող է շփոթունք առաջացնել, բայց պատմութիւնը մի դպրոցական աղջկայ մասին է, որը «Բիթլզ»-ի եւ յատկապէս Ջոն Լենոնի մեծ երկրպագու է: Չերոսուհին տղայի նման է հագնւում եւ դա անում է զուտ այն պատճառով, որ նրա



կուռքը տղայ է: Նա ապրում է իր հասունցման բոլոր փուլերը, նրան չեն հասկանում շրջապատում եւ տանը: Անգամ նրա ընկերուհիները, ովքեր սկզբում իր նման էին ժամանակի ընթացքում փոխում են: Այս ներկայացումը այն ներկայացումներից էր, որ բուռն արձագանք ստացաւ, ծափահարութիւններից պարզ դարձաւ, թէ հանդիսատեսը որքան էր հաւանել ներկայացումը: Անգամ այն աւարտելուց յետոյ հանդիսատեսը անմիջապէս չլքեց դահլիճը, զրոյցն ու քննարկումները դերասանուհու եւ ռեժիսորի հետ երկար տեւեցին:

**Իրան-** Իրանը հանդէս եկաւ մի քանի թատերախմբով, որոնցից մէկը «Մին» թատրոնն էր «Ճիչ» ներկայացմամբ: Գործողութիւնները տեղի են ունենում հոգեբուժարանում, հինգ տարբեր հերոսները ներկայացնում են իրենց պատմութիւնները, խաղը հիմնականում ներկայացւած է ժեստերի եւ շարժման միջոցով, իսկ երկխօսութիւնները քիչ են:

**Մեծ Բրիտանիա-** «Բոննի եւ Քլաիդ՝ երրորդ դէմքից» ներկայացումը պատմում է Բոննի Պարկերի եւ Քլաիդ Բերրոուի յայտնի պատմութիւնը: Ոչ ոք տեղեակ չէ սիրահար մարդասպանների

պատմութեան մանրամասնութիւններին, սակայն նրանց սիրոյ պատմութիւնը տարածւել է աշխարհով մէկ: Անձնական պատմութիւնների, լուրերի, վիդեոնկարահանումների եւ գծագրերի օգնութեամբ վերականգնել է Բոննիի եւ Քլաիդի հանդիպումը: Ներկայացման միջոցով բացայտում ենք յայտնի սիրահարների կեանքը եւ մահը:

